

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը Բուժաշխատողի օրվա առիթով

Սիրելի՛ բուժաշխատողներ,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ և ցանկանում գնահատանքի ու երախտիքի խոսքեր ուղղել ձեզ: Դուք անձնվիրաբար ու պատվով եք կատարել ձեր առաքելությունը, յուրօրինակ ակնածանք առաջացնելով ձեր մասնագիտության նկատմամբ, քանի որ ձեզ է վստահված մարդու համար ամենաթանկը՝ առողջությունը:

Վերջին տարիներին մարզի առողջապահության ոլորտում իրականացվող ծրագրերը հնարավոր չէր լինի կյանքի կոչել առանց ձեր գործուն աջակցության ու անմիջական մասնակցության: Այսօր մարզի արդիականացված բժշկական կենտրոններում ստեղծվել են բարենպաստ պայմաններ՝ բնակչության բուժսպասարկումը պատշաճ մակարդակով իրականացնելու համար, սակայն անելիքներ դեռ շատ կան:

Վստահեցնում եմ, որ դրանք ևս մեր ուշադրության կենտրոնում են և արվում է հնարավորը՝ առկա խնդիրները լուծելու ուղղությամբ:

Անկախության տարիներին մեզ պարտադրված պատերազմներում դուք մեկ անգամ ևս փաստեցիք, որ ի զորու եք հաղթահարել բոլոր դժվարությունները՝ թև ու թիկունք դառնալով ու քաջալերելով առաջնագծում կանգնած հայ զինվորին:

Սիրելի՛ բժիշկներ, բուժքույրեր, բուժաշխատողներ, արժևորելով ձեր անմնացորդ նվիրվածությունն ու մարդկանց նկատմամբ սրտացավ վերաբերմունքը՝ կրկին շնորհավորում եմ մասնագիտական օրվա առթիվ, մաղթում քաջառողջություն, երջանկություն ու հաջողություններ ձեր բարդ ու պատասխանատու աշխատանքում:

ՀՀ Սյունիքի մարզպետ

Ս. Խաչատրյան

21 հունիսի 2016թ.